ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**19-ը մայիսի, 2020թ., N18**

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 19.05.2020Թ. ԹԻՎ 06 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 19.05.2020թ. թիվ 06 նիստի օրակարգը՝
1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Գետաշեն թաղամասում կառուցված ջրամատակարարման համակարգը, սեփականության իրավունքով անհատույց Ջրային կոմիտեին հանձնելու մասին:
2. Հայանիստ համայնքի 2020թ. վարչական բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին:
3. Հայանիստ համայնքի մսուր-մանկապարտեզի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

*Ավագանու անդամներ՝*
1. Ալեքսանյան Ռազմիկ կողմ
2. Գրիգորյան Զորիկ կողմ
3. Գևորգյան Սարգիս կողմ
4. Կատանյան Լևոն կողմ
5. Մկրտչյան Գեորգի կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

19.05.2020թ.
գ. Հայանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

**19-ը մայիսի, 2020թ., N19**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԳԵՏԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **ավագանին որոշում է՝**

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Հայանիստ համայնքի Գետաշեն թաղամասում կառուցված ջրամատակարարման համակարգը, սեփականության իրավունքով անհատույց հանձնել Ջրային կոմիտեին:

2.Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Հայանիստ համայնք, Գետաշեն թաղամաս:

Գույքի ծածկագիրն է՝__:

Գույքի երկարությունը՝ 5333 գծմ խողովակաշար, թվով՝ 85 դիտահոր:

Գույքի նպատակային նշանակությունը՝ ____:

Հողամասի գործառնական նշանակությունը՝ ___:

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

19.05.2020թ.

գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
**19-ը մայիսի, 2020թ., N20-Ն**

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայանիստ համայնքի 2020 թ. վարչական բյուջեի փոփոխությունները.
1. 6.3.1 Ջրամատակարարում.
4241 հոդվածից պակասեցնել 500.0 (հինգ հարյուր հազար) հազար դրամ և պլանը հաստատել 100.0 (մեկ հարյուր հազար) հազար դրամ:
2. 6.4.1 Արտաքին լուսավորություն.
4241 հոդվածից պակասեցնել 550.0 (հինգ հարյուր հիսուն հազար) հազար դրամ՝ և պլանը հաստատել 450.0 (չորս հարյուր հիսուն հազար) հազար դրամ:
3. 11.1.1 Պահուստային ֆոնդ.
4891 հոդվածից պակասեցնել 1000.0 (մեկ միլիոն) դրամ և պլանը հաստատել 1 975 447 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր քառասունյոթ հազար) դրամ:
4. 4.2.4 Ոռոգման ցանց.
4657 հոդվածին ավելացնել 2050.0 (երկու միլիոն հիսուն հազար) դրամ և պլանը հաստատել 3050.0 (երեք միլիոն հիսուն հազար) դրամ:

***Ավագանու անդամներ՝***
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

19.05.2020թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
**19-ը մայիսի, 2020թ., N21**

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայանիստ համայնքի մսուր-մանկապարտեզի՝ 18.05.2020թ. ծնողական ժողովի թիվ 2 արձանագրությունը՝ ***ավագանին որոշում է՝***

1.Թույլատրել ժամանակավորապես դադարեցնել Հայանիստ համայնքի մսուր-մանկապարտեզի գործունեությունը:

*Ավագանու անդամներ՝*
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գևորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳԻՍՅԱՆ

19.05.2020թ.
գ. Հայանիստ